







Խմբագրական Թղթածրար՝	5
Սպիտակ Լեռներուն Վրայ...	7
Հարցազրոյց՝ Հրաչ Չիլինկիրեան Ուսումնական՝	12
● Մեսրոպեան Արիեստից Վարժարան	14
● Լեզուական Արատներու Դարձանում	15
Չեռնարկներ	16
Կարծիք՝ ...	19
Արուեստ	20
Նորածնութիւն՝ Նուհա Ռահպանի	22
Հարցազրոյց՝ Անի Եփրեմեան	23
Reportage՝ Պոլոճ Համուտ 2000	25
Բժշկական՝ X-ճառագայթները եւ Յոյ կիները	30
Սննդագիտական՝	
Խորհուրդներ Յոյ կիներուն	31
Սեր եւ Սեռ	32
Happy Valentine՝	
● Աստղերը Ինչպէ՛ս Կը Տօնեն...	34
Բժախնդիր Մարդու Տաղանդները Հարցարան՝	38
Դժուարութիւնները Քեզ Կը Հրապուրեն՞	39
Գեղեցկագիտական՝	
Խնամքը Գեղեցկութեան Սկիզբն է	41
Արական՝	
● Սորթի Խնամք	42
● Հայր Դառնալու Բարիքները	42
Computer՝ DVD	43
Գրական՝ Չիմովնիկի Մաիը	46
Գրադարան	47
Mysteries՝ Փարաուններու Անտճիը Իրականութիւն...՞	50
Decoration	52
Բուսագիտական	54
Studio՝ Նապիլ Պըշարա	57
Եւայլն	58
Սինեմա	59
Երաժշտութիւն	62
Աշխարհ՝ AIDS	64
Մարզական՝	
● Մաթիաս Զամըր	66
● Արմէն Նազարեան	67
● Լիբանանի Ֆութպոլի Ախոյեանութիւն	67
Խոհանոց	69
Guide	70
Օրէնքներ	70
Ժպիտ	71
Ժամանց	73
Աստղերու Հետ	76
Տրուիտներուն Աղբարիը	79
Պատկերներ	83
Ազատ Բեմ	86



ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ.

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ՈՐԵՒԷ ՍՓԻՒՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՈՐ ԳՈՅԱՏԵՒՈՒՄՆ Է»

Լիբանանեն Ամերիկա գաղթած Հրաչ Զիլինկիրեան տէրն է եկեղեցական, լրագրական եւ ուսումնական հարուստ փորձառութեան: Լոնտոնի Համալսարանին մէջ ներկայիս ան կը պատրաստէ իր տոբորական թէզը Ղարաբաղի մասին եւ այս նպատակով յաճախ կ'այցելէ Հայաստան եւ Արցախ: «ԱՐԻՆ» հանդիպեցաւ այս երիտասարդ մտաւորականին եւ ունեցաւ հետեւեալ գրոյցը:

■ Կրնայի՞ք ձեր կենսագրական գիծերը ներկայացնել:

● Ծնած եմ Պէյրութ: Նախնական ուսումն ստացած եմ Ազգային Ռութինեան եւ ապա Վ. Թէֆեան վարժարաններուն մէջ: 5 տարիներ յաճախած եմ Երուսաղէմի ընծայարանը, որմէ վկայուելէ ետք, 1981 թուականին մեկնած եմ Ամերիկա, շարունակելու համար բարձրագոյն ուսումն: 81էն 84 ուսած եմ Նիւ Եորքի Քոնորտիա Քոլէճին մէջ, ուրկէ տիրացած եմ պսակաւոր արուեստից (BA) տիտղոսիմ` անգլիական գրականութեան մէջ: Առանց ընդմիջումի շարունակելով ուսումն, 1987ին տիրացած եմ մագիստրոսի աստիճանին, աստուածաբանութեան մէջ: Մինչեւ 1991 պաշտօնավարած եմ Լոս Անճելըսի հայ գաղութին մէջ, միեւնոյն ժամանակ ստանալով մագիստրոսի երկրորդ տիտղոս մը` ֆաղափական գիտութիւններու մէջ: 1991ին փոխադրուած եմ Նիւ Եորք, վարելով Ս. Ներսէս Աստուածաբանական ճեմարանի տեսչութիւնը: 1994ին գացած եմ Լոնտոն` London School of Economics and Political Science, պատրաստելու համար տոբորական թէզս ընկերաբանութեան ճիւղին մէջ: Թէզիս նիւթն է` Արցախի ժողովուրդին

վրայ պատերազմի ազդեցութիւնը` ընկերաբանական անկիւնէ, եւ պետական կարգերու ստեղծումն ու հաստատումը հոն:

■ Նկատի առնելով, որ բաւական ժամանակէ ի վեր հաստատուած է Ամերիկա, կ'ուզէիմ գիտնալ ամերիկահայ երիտասարդութեան մօտեցումը հայկական հարցերուն:

● Վերջին շրջանը կրնամք երկուքի բաժնել, առաջինը Հայաստանի անկախացումէն առաջ, իսկ երկրորդը` անկախացումէն ետք. ես կը խորհիմ, որ որակական տարբերութիւն մը կայ: Առաջին հանգրուանին հետաքրքրութիւնը աւելի ուղղուած էր հայ մշակութիւն, պատմութեան, լեզուին եւայլն. իւրաքանչիւր գաղութի մէջ շեշտուած երեւոյթը այն էր, որ մշակութային եւ ֆաղափական կազմակերպութիւններ ու դպրոցներ կը փորձէին հայ երիտասարդութեան մէջ որոշ չափով պահել հայկական-ազգային գիտակցութիւնը:

Ամերիկայի մէջ երիտասարդութիւնը աւելի անգլերէն կը խօսի, քան հայերէն: Ընկերաբանական իմաստով եթէ մայիմ, իւրաքանչիւր սերունդ, որ կ'անցնի, իր լեզուական եւ մշակութային ազգային գիտակցութիւնը աւելի կը նուազի: Պէտք է աշխատանք տարուի, որ ի գին ամէն դժուարութիւններու այդ գործողութիւնը աւելի դանդաղ ընթանայ: Ինչպէս գիտեմք, երբ սփիւռքի մէջ կ'ապրին տարբեր մշակութային միջավայրերու մէջ, հայկական ինքնութիւնը պահելը ինքնին դժուար հարց մըն է:

■ Իսկ անկախացումէն յետո՞յ:



● Երիտասարդութեան մօտ, յատկապէս մասնագիտացած երիտասարդութեան մօտ, շատ աւելի մեծ հետաքրքրութիւն կայ` ֆաղափական, մշակութային եւ տնտեսական իմաստներով, որովհետեւ Հայաստանը իբրեւ պետականութիւն, հսկայական դաշտ մը կը բանայ հայ իրականութեան առջեւ:

Ամերիկայէն եւ Քանատայէն 30էն 40 երիտասարդներ կազմուած խումբեր կ'երթան Հայաստան, ուր աշխատելով կ'օգնեն տեղական բնակչութեան: Մնայուն այլ ծրագիրներ ալ գոյութիւն ունին` բժշկական, առեւտրական...: Այս բանը կ'օգնէ իրենց պահելու իրենց հայկական ինքնութիւնը:

■ Անցեալ ամառ, Երեւանի մէջ կազմակերպուեցաւ ուսանողական համահայկական հաւաք մը: Որքանո՞վ այսպիսի ձեռնարկներ, կամ ընդհանրապէս Հայաստան-Սփիւռք ուսանողական համագործակցութիւնը կրնան նպաստել Հայաստանի եւ Սփիւռքի յարաբերութեան ամրապնդման եւ փոխադարձ հարցերու լուծման:

● Հայաստանը անմիջական եւ հեռանկարային ձեւով իր պետերը ունի. նոյնպէս Սփիւռքն ալ ունի անմիջական իր պետերը, որոնք սակայն այնքան ալ հրատապ չեն, որքան Հայաստանի պետերը:

Ես կը խորհիմ, որ այն սփիւռքահայը, մանաւանդ երիտասարդը, որ Հայաստան կ'այցելէ, նոյնիսկ եթէ որեւէ ծրագրի մաս չկազմէ, մեծապէս կ'ազդուի: Ինչ ալ ըլլան պայմանները,

երբ անձ մը իր հայրենիքը կ'այցելէ, այդ մէկը իր մէջ ներգործութիւն կ'ունենայ: Կը ժամօթանայ Հայաստանի ժողովուրդին, ապրելակերպին, մշակոյթին՝ նաեւ համամարդկային դիտանկիւնով:

Երբ որ սփիւռք մը հայրենիքի չունի, այդ սփիւռքը ժամանակի ընթացքին պիտի ծուլուի կամ տկարանայ:

Որեւէ սփիւռքի համար հայրենիքի գոյութիւնը եւ անոր զօրացումն ու շարունակականութիւնը կարեւոր դեր ունին անոր գոյատեւման մէջ:

■ Անցնինք մանուկին: 1990էն ի վեր կը հրատարակէ Window կրօնական անզլերէն եռամսեան: Ի՞նչ պահանջ կար այսպիսի թերթի մը հրատարակութեան:

● Խումբ մը երիտասարդներով Window սկսանք հրատարակել, յատկապէս անցնել արդի ժամանակներու դիտանկիւնէն արծարծելու համար հայ եկեղեցւոյ հետ կապուած հարցեր: Ուզեցինք որ անկախ հրատարակութիւն մը ըլլայ եւ կապ չունենայ եկեղեցական որեւէ մարմնի հետ:

Window-ի նպատակն էր վերադառնալ մեր սփիւռքահայ գաղութային

կեանքը՝ կրօնական եւ եկեղեցական տեսանկիւնէն: Ներկայիս Window կը հրատարակուի Ինթըրնետի վրայ (հասցէ՝ <http://www.sain.org/window>):

**Երբ որ սփիւռք մը
հայրենիք չունի,
այդ սփիւռքը
ժամանակի ընթացքին
պիտի ծուլուի կամ
տկարանայ**

■ Տոբորական թեզի պատրաստութեան համար քանի մը անգամ այցելած էք Արցախ. ինչպէ՞ս կը գնահատէք կացութիւնը եւ ժողովուրդին ապրելակերպը:

● Պէտք է ըսել, որ վերջին տարիներուն, այսինքն 1988էն ետք, Ղարաբաղի ժողովուրդը մեծ իրադարձութիւններէ անցաւ եւ իրապէս շատ

տպաւորիչ է իրենց մինչեւ այս կէտը հասնիլը եւ ընկերային ու քաղաքական փոփոխութիւններէ անցնիլը: Արցախի ժողովուրդը կրցաւ ոչ միայն դիմադրել այս դժուարութիւններուն, այլ նաեւ յաղթահարել զանոնք:

Այսօր երբ կը դիտենք Ղարաբաղը, կը տեսնենք որ այսօր շատ անելի կանոնաւորուած, պետական կարգեր ունի եւ իշխանութիւնները արդէն կը հոգան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետներն ու կը կատարեն իրենց պետական պարտականութիւնները:

■ Ղարաբաղեան տագնապի լուծումը ինչպէ՞ս կը պատկերացնէք:

● Առայժմ լուծում չկայ, որովհետեւ թէ Ղարաբաղի հայութիւնը եւ թէ Ատրպէյճանը պատրաստ չեն զիջումներ կատարելու: Կողմերը բոլորովին հակառակ կարծիքներ ունին, լուծումի պայմաններուն, Ղարաբաղի կարգավիճակին, աշխարհագրական սահմաններուն եւ զանազան այլ հարցերու վերաբերեալ:

ԺԻՐԱՅՐ ԳԼԸԵՆԱՆ

**WATERTECH ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ
ՄԻՇՏ ՈՒՇԱԴԻՐ
ԶՈՒՐԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ**

Զուրի ապականուցը հրատապ հարց է այսօր ամբողջ աշխարհի մէջ, եւ հիմնական սպառնալիք մը՝ մեր առողջութեան: 1991ին հիմնուած Watertech հաստատութիւնը հպարտ է ըլլալու Լիբանանի մէջ գործող հագուածու հաստատութիւններէն մէկը, որ ամբողջականօրէն զինուած է անհրաժեշտ կազմածներով, լուծելու համար ջուրի ապականումին հետ կապուած հարցեր:

Watertech մասնագիտացած է ըմպելի եւ զտուած ջուրի գործիքներու հաստատման մէջ:

Watertech կը տրամադրէ նաեւ ժամանցի յարմարութիւններ, ինչ-

պէս՝ լողաւազաններ, սաունա, ժամուրդի, արեւելեան բաղնիքներ եւ ցայտադրուածներ:

Հիմնուելով իր ճարտարագէտներուն եւ թեքնիկ խմբակին վրայ, Watertech կ'ապահովէ ձեր լողաւազանին մաքրութիւնը, ձեր ընտանիքին շնորհելով առողջապահական սկզբունքներու վրայ հիմնուած ապրելակերպ մը:

Watertech Լիբանանի միակ ներկայացուցիչն է բազմաթիւ եւրոպական եւ ամերիկեան ընկերութիւններու:

Watertech-ի իրագործած ծրագիրներէն յիշենք՝

- Deir El Kalaa Country Club - The

- Plaza Club
- Meshref Country Club - Stallion Private Club
- Halate Marine - La Gondola - Zoukotel
- Solipro Faqra - Cap Sur Ville - Hopital Trad
- Eye & Ear Hospital - St. George Hospital
- Primotel - Kanjotel - Cadmos Hotel - Hotel St. Georgios
- St. Michel Hotel - Promenade Hotel
- Restaurant Retro - Restaurant Khyam El - Hana
- Borj al Hamam
- Ministry of Defence - French Embassy.

Watertech

Անթիլիասի մայրուղի,
«Սուլթան Իպրահիմ» շէնք,
6րդ յարկ
Հեռ. (01)406308, 405319 -
(03)675757
Ֆաքս. (01)520317